

ԵՐԵՎԱՆԻ Հ .102 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

«Ֆիզիկան և քիմիան կյանքում»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախագծի ղեկավարներ՝

Գ. Կիրակոսյան , Ա. Թադևոսյան

Դասարան -7

Առարկա- Ֆիզիկա, քիմիա

Թեմա – «Ֆիզիկան և քիմիան կյանքում»

06.10.23-13.11.23թ. Ժամանակահատվածում իրականացվել է ֆիզիկա և քիմիա առարկաներից ուսումնական նախագիծ: Աշխատանքները իրականացվել են նախապես հաստատված պլանին համապատասխան: Սովորողներին ներկայացրել ենք հախազծի հիմնահարցերը, բացատրել, թե՞ ինչ պետք է անեն այս նախագծի շրջանակում: Քննարկվել է, թե որքանո՞վ է այդ հիմնահարցը արդիական: Ձևավորվել է խումբ: Սկզբնական շրջանում 5 աշակերտ էր ընդգրկվել, հետագայում 2 աշակերտ հրաժարվեց նախագծից: Նախագծային աշխատանքին մասնակցեցին 3 աշակերտ՝

1.Հարությունյան Անրի

2.Մնացականյան Անի

3.Սարայան Մարիա

Խմբի մասնակիցները հնարավորություն էին ստացել ստանձնել խմբում իրենց դերը՝ ըստ նախասիրության: Յուրաքանչյուրին տրվել էր հստակ առաջադրանք: Խումբը պատասխանատվություն էր վերցրել առաջադրանքի կատարման համար: Նրանք նախապես որոշել էին, թե նախագծի վերջնարդյունքը ինչ ձևաչափով են ներկայացնելու, երբ արդեն պատրաստ լինի հետազոտության արդյունքները: Վերջնական պրոդուկտը որոշեցին ներկայացնել գրքույկի ձևով, ունենալու էին հարցազրույց, սալիկաշար, փորձեր: Իրականացրեցին հարցումներ իրենց հասակակիցների շրջանում կազմված հարցերի հիման վրա: Տարբեր աղբյուրներից հավաքած տեղեկությունները, փաստերը համադրեցին, վերլուծեցին, մշակեցին և ներկայացրեցին:

Տեղի ունեցավ քննարկումներ հավաքագրած տվյալների շուրջ: Վերանայելուց հետո սովորողները աշխատեցին վերջնական պրոդուկտ ստեղծելու ուղղությամբ:

Նախագծային աշխատանքի պաշտպանության ժամանակ աշակերտները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները, հույզերը և սպասումները, ձեռք բերած գիտելիքները և զարգացրած հմտությունները: Համառոտ ներկայացրեցին, թե ո՞րն է եղել նախագծի նպատակը, ի՞նչ եզրահանգման են եկել, ի՞նչ չափով է արդյունավետ եղել թիմային համագործակցությունը:

Նախագծի վերջնարդյունքում սովորողները դրսևորեցին հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, համատեղ ստեղծելու տեղեկատվական արդյունք:

Խմբի նախագծային աշխատանքը գնահատվեց 8 միավոր:

Ուսուցիչներ՝ Գ. Կիրակոսյան, Ա. Թադևոսյան